

ՌԱԴԻՈՌԵՊՈՐՏԱԺ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռադիոլրագրությունը ծավալուն աշխատանք է: Տպագիր լրագրության հետ համեմատած, այն ավելի բարդ է եւ ենթադրում է ավելի պակաս «գրավչություն», քան հեռուստատեսությունը:

Եթե դուք որոշել եք ռադիոլրագրությամբ զբաղվել, ուրեմն պարտավոր եք ընդունել որոշ պարտադիր կանոններ եւ նախապայմաններ:

- **Դուք պարտավոր եք գերազանց լրագրող լինել:** Դա գեղեցիկ դեմք կամ հաճելի ձայն ունենալը չէ: Եւ ոչ էլ բարձրակարգ սարքավորումները կամ ձեր երեւակայած արտադրանքը: Ռադիոլրագրությունը լրագրության առաջին եւ հիմնական ձեւն է, որն աշխարհը բացատրում, մեկնում է մարդկանց գիտելիքներն ընդլայնելու ճանապարհով եւ օգնում հասկանալ մեր շուրջը կատարվող իրադարձությունները: Դուք պետք է համառ լինեք ձեր հարցերի պատասխանները փնտրելիս, դեպքերի զարգացման մասին ունենաք ձեր սեփական կարծիքը, կարողանաք որոշել, թե որն է կարելուր եւ որը՝ ոչ, ինչպես նաեւ հասկանալ, թե ինչն է ճշմարիտ եւ ինչը՝ ներդաշնակ:

- **Դուք պետք է շատ լավ գրել իմանաք:** Որեւէ փաստի մասին լսելով՝ դուք պետք է կարողանաք այն անմիջապես հաղորդել ուրիշներին: Ռադիոյի հանդեպ պահանջները շատ բարձր են. ռադիոտեսքստը պետք է զանգվածային լրատվության բոլոր միջոցներից ամենաընկալելիին լինի:

- **Դուք պետք է հրաշալի պրոդյուսեր լինեք:** Ռեպորտաժ գրելը գործի մի մասն է միայն: Դուք պետք է կարողանաք «արտադրել» ձեր սյուժեն. պրոֆեսիոնալ սարքավորումներով ձայնագրել այն, անհրաժեշտ բարձրությամբ կարգավորել հնչողությունը, ձայնը: Ըստ ամենայնի, դուք՝ գերազանց լրագրող լինելով հանդերձ, պարտավոր եք նաեւ ձայնագրման ինժեներ լինել:

- **Դուք պարտավոր եք լավ ունկնդիր լինել:** Դրան երբեմն ասում են «լավ ականջ ունենալ»: Ռադիոն, ամեն ինչից բացի, նաեւ «լսողական» լրատվամիջոց է, ուր դուք պետք է կարողանաք առաջին իսկ պահին մյուս բոլոր ձայների ու աղմուկի միջից լսել եւ հասկանալ այն, ինչ անհրաժեշտ է:

Ազգային Հասարակական Ռադիոյի (National public Radio, NPR) թողարկած լրատվական ծրագրերը կարճ պատմություն ունեն. առաջին ծրագիրը եթեր է տրվել 1971 թվականին: Ի սկզբանե, NPR-ի լրահաղորդների եւ պրոդյուսերների նպատակը եղել է ամերիկյան ինչպես տպագիր, այնպես էլ ռադիոլրագրության լավագույն ավանդույթների պահպանումը: Այդ ավանդույթը ենթադրում է անկախության ու

ճշմարտության որոնման ձգտող ազատ մամուլ եւ անաչառություն: NPR-ը նախ եւ առաջ հասարակությանը ծառայելու ազնիվ առաքելություն ունի եւ ժողովրդավարական հասարակության մեջ կենսական ու կառուցողական դեր է խաղում:

NPR-ի լրագրությունը

Լուսաբանում: Տարիներ շարունակ NPR-ում կատակով ասում էին, թե իրենց մոտ նորությունները մեկ օր ուշացումով են հաղորդվում եւ կոչվում են «վերլուծություն»: Հիմա այլեւս նման բան չի լինում: Ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ արտասահմանյան երկրներում ունեցած մեծաքանակ թղթակիցների միջոցով NPR-ը հնարավորություն ունի հենց դեպքի վայրերից եւ անմիջապես լուսաբանել բազմապիսի իրադարձություններ:

Վերլուծություն: Ի հավելումն տեղից տրվող ռեպորտաժների, առավել կարելոր իրադարձությունների լուսաբանման համար օգտագործվում են նաեւ հարցազրույցներն ու ընդարձակ նյութերը: Ընտրությունների անցկացման տարին, Նախագահի ելույթի նախօրեին թղթակիցները երկրի չորս տարածաշրջաններում ուսումնասիրում էին ապագա առաջնորդից մարդկանց պահանջներն ու սպասելիքները:

NPR-ի վերլուծություններն իրենց մեջ ներառում են նաեւ դեպքերի պատմական պատճառներն ու ակունքները, մարդկանց եւ գաղափարախոսությունները մեկնաբանող ռեպորտաժներ:

Ձայները: NPR-ի կարելոր բնութագրիչներից մեկն էլ այն է, որ այն մարդկանց հնարավորություն է տալիս խոսել իրենց անունից: NPR-ի ռեպորտաժներում օգտագործվում են լրահաղորդների, ազդեցիկ մարդկանց, փորձագետների, շարքային քաղաքացիների, ուժեղ եւ թույլ մարդկանց ձայները: Որոշ հարցազրույցներ եթեր են գնում ավելի քան 10 րոպե: Հարցազրույցների տեւողությունը հիմնականում 4-5 րոպե է: Բայց այդ 4-5 րոպեի դեպքում անգամ դրանք շատ ավելի երկար են, քան սովորական հեռուստատեսային հարցազրույցները: Իսկ տպագիր մամուլում հարցազրույցը գնալով շատ ավելի հազվադեպ է դառնում:

Խմբագրումը: Այն ամենը, ինչ թողարկվում է NPR-ում, խստորեն խմբագրվում է: Հիմնականում առնվազն 2 խմբագիր պարտավոր են ստուգել նյութերը, լսել դրանք եւ եթերի «թույլատվություն» տալ:

ԱՐԴԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

«Անկողմնակալություն» տերմինը որոշ մարդկանց մեջ բարդություններ է հարուցում: Այդ հասկացությունը ես միշտ ընկալել եմ ուղիղ իմաստով, որպես «փաստերի վրա հիմնված լրագրություն»: Այն ամենն ինչ եթեր է տրվում, սկսած ուղղակի նորություններից մինչեւ դրանց հիմնավորապես խմբագրված վերլուծությունը, այդ ամենն ամրապնդվում է փաստերի որոնմամբ եւ լուսաբանմամբ՝

ինֆորմացիայի այդ հավաստի բաղադրիչներով, որոնք «հում» նյութ են, հստակ հաղորդակցություն:

Լրագրողի առաջին պարտականությունը որոշակի կարելություն ներկայացնող փաստերի հայտնաբերումն է, ունկնդիրների հանդեպ անկեղծությունը եւ արդարամտությունն այն փաստերի նկատմամբ, որոնք հնարավոր չի եղել ձեռք բերել կամ հաստատել, ինչպես նաեւ ինֆորմացիան ունկնդիրին հասկանալի շարադրանքով մատուցելը:

Արդարությունը փաստերով հիմնավորված լրագրության բնական արդյունքն է:

Որեւէ մարդու կամ նրա տեսակետը ներկայացնելիս աշխատեք օգտագործել այնպիսի ձեւակերպումներ, տերմիններ, որոնք ձեր ներկայացրած մարդն ամենադիպուկը կհամարեր: Խուսափեք ձեր անհատական նախասիրություններն ու կանխակալությունը վկայող ձեւակերպումներից. ինչպես օրինակ, օգտագործել «հաստատել» բառը, երբ «ասել»-ը բերելու ավելի ընդունելի կլիներ, ասել «հրաժարվեց մեկնաբանել», երբ ճիշտը «խուսափեց»-ն է, ասել «հնարավոր համարել», փոխանակ՝ «ասել» կամ «խոստովանել»:

Քաղաքականությամբ զբաղվող կնոջ սանրվածքն ու արտաքինը նկարագրելը կամ իտալացի քաղաքական գործչի մականվան, ֆիզիկական տվյալների մասին խոսելը միշտ չէ, որ ցանկալի է կամ հիմնավորված: Առանց դիտավորության՝ դա կարող է հնարավոր ստերեոտիպ դառնալ:

Խմբագրման յուրաքանչյուր փուլում՝ սկսած նյութի նախապատրաստումից մինչեւ վերջնական համակցումը, հարկավոր է «ազատ մտածողություն» ունենալ: Դա ձեզ կօգնի արդարամիտ լրագրող դառնալ: Եթե խմբագրական քննարկումների ընթացքում դուք համարեք, թե ծանոթ չեք ձեր գործընկերների անհատական կարծիքներին, կնշանակի դուք մտավոր բարձր կարգապահություն ունեք: Դա առանձնապես կարելու է այնպիսի հակասական հարցեր քննարկելիս, ինչպիսին օրինակ աբորտների խնդիրն է:

ԱՐԲՅՈՒՆԵՐ, ՎՍԱՀՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Հավաստի աղբյուրների օգտագործումը, ինչպես նաեւ հղումը դրանց՝ լրագրողի պարտականությունն է: Միակ բացառությունն այն ինֆորմացիան է, որի մասին վաղուց բոլորը գիտեն: Ինչքան կարելու է հակասական է ինֆորմացիան, այնքան ավելի հավաստի պետք է լինեն նրա աղբյուրները: Ընդհանրապես, լրագրողը պետք է ինֆորմացիայի առնվազն երկու աղբյուր ունենա, իսկ դրանցից յուրաքանչյուրը՝ ինֆորմացիայի ստացման իր մեթոդը: Հատուկ կարելության իրադարձությունների դեպքում երկու աղբյուր ունենալու կանոնը միանշանակ է: Բացառություն են միայն պաշտոնական հրապարակային հայտարարությունները: Սա մաթեմատիկական կանոն չէ եւ պետք է ընդունվի անմիջապես: Որոշ դեպքերում, ասեմք, երբ տվյալ ինֆորմացիան ստանալու հնարավորությունը հարցականի տակ է, նույնիսկ երկու աղբյուր ունենալն էլ

քիչ է: Իսկ եթե բերվում է որեւէ վկայի ցուցմունք, ապա հավաստի կերպով ներկայացնող մեկ աղբյուրն էլ բավական է:

Եթե ինֆորմացիան հաղորդողը հրաժարվում է, որ ռադիոյով իր անունը հրապարակվի, ինֆորմացիայի արժեքը զգալիորեն ընկնում է: Լրագրողը հնարավոր ամեն ինչ պետք է անի ինֆորմացիա հաղորդողին համոզելու, որ վերջինիս խոսքը ձայնագրվի: Եթե դուք լրատուին գաղտնիություն եք խոստացել, նախազգուշացրեք, որ խմբագիրը կարող է չհամաձայնվել անանուն տեղեկություններ եթեր տալ: Լրատուն պետք է հասկանա նաեւ, որ գաղտնիության համար պատասխանատու են թե՛ թղթակիցը, թե՛ խմբագիրը: Խմբագիրը կարող է պահանջել, որ լրագրողը հայտնի ինֆորմացիայի աղբյուրը, համոզվելու համար՝ վստահելի՞ է արդյոք այն:

Գրագողությունը մի հեղինակի կողմից մեկ ուրիշ հեղինակի գրավոր կամ բանավոր ստեղծագործության անօրինական յուրացումն է եւ այդ ստեղծագործության ներկայացումն իբրեւ սեփականի: Դուք չպետք է ձեզ վերագրեք ուրիշի ստեղծագործությունը: Եւ եթե նույնիսկ դուք լրատվական գործակալությունից ստացված լուր եք հաղորդում, խուսափեք «գողացված» արտահայտություններից եւ բառացի վերապատմումից: Դա իրավական խնդիր չէ, բայց դուք լրատվական գործակալության կողմից արված նկարագրություններն ու վերլուծությունները չպետք է իբրեւ ձերը ներկայացնելով հաղորդեք: Գրեցեք կամ ասացեք այդ ձեր բառերով: Եթե ինֆորմացիան հիմնված է մեկ այլ լրատվական գործակալության բացառիկ նյութի վրա, ապա գործակալությանն արված հղումը պարտադիր է:

ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՈՒՄ

Սխալները ամենօրյա լրագրության անխուսափելի մասն են: Եթե այդպիսիք պատահում են եւ դատարկ վրիպակներ չեն, ապա պետք է ընդունել դրանք եւ շտկել հենց եթերում կամ էլ հաղորդման սցենարում:

Սխալների ուղղումը հաճախ կատարվում է նամակների բաժնում, բայց մի հապաղեք, լուրջ սխալներն ուղղեք մինչ բողոք-նամակների ստացումը:

ԱՆՉԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՃ

Ռադիոյում թղթակցի ձայնն ու անհատականությունն օգտագործվում են սյուժեն լավագույնս ներկայացնելու համար: Բայց ոչ ավելին: Լրագրողը չպետք է անմիջականորեն ներքաշվի սյուժեի մեջ, ինչպես լինում է տեքստում առաջին դեմքով խոսելիս կամ ձայնագրություններ օգտագործելիս, որովհետեւ այդպես ուշադրությունն ավելի շատ կենտրոնանում է լրագրողի, քան խոսակցության նյութի վրա:

Թղթակիցը հասարակության աչքում տեղեկատվության ոլորտի ամենացայտուն ներկայացուցիչներից մեկն է: Չասարակության մեջ նրա վարվելակերպը պետք է համապատասխանի այդ դերին: Թղթակիցները չպետք է հազար ու մի հնարքներ

բանեցնեն, օրինակ, նյութը ձեռք գցելու համար ուրիշի անունով ներկայանան: Լրագրողը նաեւ չպետք է ձայնագրի որեւէ մեկին՝ առանց վերջինիս համաձայնության:

ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն օր անհաշիվ դեպքեր են կատարվում, բայց դրանց մեջ քչերն են համարվում նորություններ: Ի՞նչն է, որ իրադարձությունը նորության է վերածում: Նախ, իրադարձությունը պետք է բավականաչափ հետաքրքիր լինի: Մարդկանց հետաքրքրելու համար հարկավոր է, որ թեման սրություն ունենա: Դա կարծիքը կամ տեսակետը չէ, այլ տվյալ թեմայի նկատմամբ լրագրողի մոտեցումը, որը պետք է գրավի ունկնդիրների ուշադրությունը: Որպես թղթակցի՝ ձեր գործն այդ սուր անկյունը գտնելն ու հստակ կերպով թեմա մտցնելն է: Առանց դրա դուք ժամանակ կկորցնեք՝ հետապնդելով ինչ-որ գաղափարներ, որոնք երբեք չեն գործի:

Ի հավելումն այս ամենի կան նաեւ որոշ կանոններ, որոնք պետք է բացատրվեն յուրաքանչյուր սկսնակ լրագրողի եւ պետք է դրոշմվեն նրա գիտակցության մեջ:

- Երբեք սյուժե մի պատրաստեք պատճառաբանելով, թե մարդիկ պետք է իմանան այդ՝ հանուն իրենց կամ երկրի բարօրության: Լրագրողները պրոֆեսիոնալ բարոյախոսներ չեն եւ հատուկ հասկացողություն չունեն, թե մարդիկ ինչ են «պարտավոր» իմանալ: Բարոյախոսությունը թողեք հոգեւորականներին եւ քաղաքագետներին:

- Մարդկանց հետաքրքրում է այն, ինչ առնչվում է իրենց: Հյուսիսային Աֆրիկայում տիրող սովն ավելի պակաս է հետաքրքրում ամերիկացիներին, քան Կալիֆորնիայում տեղի ունեցած երկրաշարժը, եթե նույնիսկ այդ սովը հազար անգամ ավելի շատ կյանք է խլել:

- Վատ լուրերը, ինչպես օրինակ բամբասանքները, տարածվում են ավելի արագ եւ ավելի հեռու, քան լավ լուրերը: Դա իսկապես այդպես է: Հնարավոր է, որ դուք ձեր քեռի Գարիկի բաժանվելու լուրն ավելի շուտ իմանաք, քան ամուսնանալունը: Տատիկն ավելի շուտ կհեռաձայնի ձեզ ասելու, որ Խաչիկի ոտքը կորտրվել է, քան եթե նա հաղթած լիներ դպրոցական օլիմպիադայում: Տեղական բանտի նոր մասնաշենքի շինարարության ավարտի մասին կարող է թեթեւակի հիշատակվել տեղական ծրագրերում, բայց այդ նույն բանտում տեղի ունեցած խռովությունը համազգային նորություն կդառնա:

- Անսովոր իրադարձություններն ավելի են հետաքրքրում մարդկանց, քան սովորականները: Տեղական օդանավակայանում 35 բարեհաջող վայրէջքներն իբրեւ լուր անուշադրության կմատնվեն (եթե իհարկե ահաբեկիչները չեն զավթել օդանավակայանը, կամ հսկիչները գործադուլ չեն հայտարարել), բայց 36-րդ ինքնաթիռի աղետն արդեն իրադարձություն է:

ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ԾՆՎՈՒՄ ՍՅՈՒԺԵՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

- **Կարդացեք լրատվական գործակալությունների ամփոփագրերը:** Դա ձեր հետազոտությունների առաջին քայլը կլինի: Բայց մի վստահեք լրատվական գործակալություններին (կամ ուրիշ որեւէ մեկին)՝ ավելի ճշգրիտ կամ սպառիչ տվյալներ ունենալու համար. ամեն ինչ ինքներդ ստուգեք:

- **Կապ պահպանեք տեղական մամուլի հետ:** Ուշադիր կարդացեք թերթերը եւ մի անտեսեք անգամ 10-րդ էջում զետեղված փոքրիկ հոդվածները: Վերջին էջերում տեղ գտած լրատվական շատ սյուժեներ որոշ ժամանակ անց տեղափոխվում են առաջին էջեր: Հետեւեք մասնագիտական թերթերին եւ ամսագրերին: Ընթերցողին հետաքրքրող իրադարձությունների մասին նրանք կպատմեն ավելի վաղ, քան հիմնական տեղեկատվական կազմակերպությունները կհայտնաբերեն դրանք:

- **Խմբավորեք ձեր աղբյուրները:** Լավագույն գաղափարները հաճախ վերցվում են աղբյուրներից: Դրանք այն մարդիկ են, ովքեր այս կամ այն պատճառով իրադարձությունների մասին իմանում են ձեզանից շուտ:

- **Ձեր սյուժեների գաղափարները եւ լրատուների կոորդինատները գրանցեք նոթատետրում:**

- **Ձեր աչքերն ու ականջները միշտ բաց պահեք ընկալելու այն ամենը, ինչ ուրիշները չեն էլ նկատում:** Եղեք հետաքրքրասեր ձեզ շրջապատող աշխարհի հանդեպ: Երբ մի անսովոր բան եք տեսնում, հարցուփորձ արեք այդ մասին: Սովորաբար, լավագույն սյուժեներն այն սյուժեներն են, որոնք դեռեւս չեն հայտնվել մամուլում:

ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Օբյեկտիվությունը լրագրության մեջ սովորաբար բուռն բանավեճերի առարկա է դառնում: Այսօր գոյություն ունի լրագրության այնպիսի դպրոց, որը համարում է, թե լիակատար օբյեկտիվության հասնելն անհնարին է, որ թղթակիցները թերեւս պետք է հրաժարվեն օբյեկտիվ լինելու փորձերից եւ իրենց գնահատականներն ու վերաբերմունքը հանդես բերեն ռեպորտաժներում: Այսպիսով, ունկնդիրները կարող են պարզորոշ լսել եւ ուշադրություն դարձնել դրանց վրա:

Այդուհանդերձ, ինչքան էլ որ բացարձակ օբյեկտիվություն հնարավոր չէ, դուք կարող եք ձգտել դրան՝ ձեր կարծիքն այդ սյուժեներում չարտահայտելով եւ փորձելով լիովին անկեղծ լինել:

Քննադատաբար վերաբերվեք ինքներդ ձեզ: Ամեն ինչին կողքից դիտողի հայացքով նայեք, որպեսզի կարողանաք լսել բոլոր կարծիքները եւ հատկապես ջանացեք հասկանալ բոլոր կողմերի փաստարկները:

Եղեք թերահավատ: Շատ ուշադիր եղեք իրադարձությանն առնչված մարդկանց նկատմամբ: Այդպիսով նրանց ազդեցությունն ավելի ակնհայտ կլինի, նրանց պատմածն

ավելի կենդանի, բացատրություններն ավելի զերծ գնահատման համակարգի մաքրագարողումներից:

Եղեք հնքնատիպ: Խոսեք այն բաների մասին, որոնք իրոք տեղի են ունեցել: Խուսափեք շարժառիթների, դրդապատճառների եւ զգացմունքների չարաշահումից: Մի՛ վստահեք տեսություններին, որոնք մարդիկ օգտագործում են իրենց մեկնաբանություններում:

ՏԵՔՍՏԻ ՄԱՏՈՒՑՈՒՄՆ ՈՒՆԿՆԴՐԻՆ

Նախքան եթեր դուրս գալը, թղթակիցներից շատերը բազմիցս վերընթերցում են իրենց տեքստերը: Այնուհետեւ, երբ նրանք արդեն եթերում են կամ ձայնագրություն է գնում, խոսքերը հնչում են ինքնաբերաբար, եւ թղթի վրայի տեքստը համարյա երկրորդական նշանակություն է ստանում: Թե ինչպես տեքստը մատուցել ունկնդրին, անձնական ճաշակի հարց է, բայց գոյություն ունեն համընդհանուր կանոններ, որոնք կարելի է ընդհանրացնել մեկ խոսքով՝ **եղեք բնական**:

Երբ ձեզ պետք է՝ դադարներ տվեք, նորմալ շնչեք, թուքներդ կուլ տվեք, եթե անհրաժեշտ է: Թող ձեր ձայնն ընթերցելիս հնչի այնպես, ինչպես կհնչեր սովորական խոսակցության ժամանակ:

Սկսնակ լրագրողների ամենատարածված խնդիրն այն է, որ նրանք չափից ավելի արագ են խոսում: Ընթերցելիս մարդիկ հակված են ավելի արագ խոսել, եւ չէր խանգարի, որ գիտակցաբար ջանայիք դանդաղ խոսել: Վտանգ կա նաեւ, որ ձեր ընթերցանությունը «երգեցողության» պես հնչի: Բարձրաձայն կարդալիս ձեր ձայնը պարբերաբար բարձրանում եւ իջնում է, եւ կարող է պատահել, որ յուրաքանչյուր նախադասության վերջում դուք անեք միեւնույն շեշտադրումը: Ձեր առոգանությունը կարող է փոփոխվել ամեն մի նախադասության մեջտեղում եւ իջնել՝ նրա ավարտին: Երկու դեպքում էլ անբնական է, երբ ձեր ձայնը պարբերաբար է փոխվում: Եթե տեքստը ձեզ ծանոթ է, կենտրոնացեք նրա էության, բուն ասելիքի վրա եւ կտեսնեք, որ ձեր ձայնն ավելի բնական կհնչի: Երբեմն լրագրողներն ընդգծում են այն բառերը, որոնք ընթերցելիս պետք է շեշտվեն: Հաճախ նրանք տեքստի վրա իրենց համար հատուկ նշաններ են դնում կամ նշումներ անում լուսանցքներում («դադար առնել», «դանդաղ կարդալ»):

Խոսեք ձեր սովորական ձայնով, ոչ թե այնպես, ինչպես ձեր կարծիքով պետք է խոսի լրագրողը: Եթե դժվարանում եք ձեր ռեպորտաժին կենդանի շունչ հաղորդել, ընթերցելիս փորձեք ժպտալ: Դա ռադիոյում թույլատրելի բան է, քանի որ ձեզ ոչ ոք չի տեսնում: Կարելորդն այն է, որ դուք զգաք ձեր կարդացած նյութը: Այդժամ ձեր ձայնն ինքը կգտնի համապատասխան երանգը: Դա համարյա նույն բանն է, ինչ դերասանական խաղը:

Ճշմարիտն ասած, լրատվական հանդեսի հաղորդավար լինելը կամ տեղեկատվական ռեպորտաժ կարդալն էլ յուրատեսակ ներկայացում է, բայց ռադիոլրագրության մեջ դերասանական հմտություններն օգտագործվում են ոչ թե փաստը մոգոնելու, այլ կենդանի մատուցելու համար:

ԼԻՆԵԼ ԽՄԲԱԳԻՐ

Թղթակիցներին հանձնարարություններ բաժանելիս խմբագիրը մտորում է, թե ինչպես այդ սյուժեներից լավ «հավաքածու» սարքի, որպեսզի այն բաղկացած չլինի միայն «ծանր», լուրջ լուրերից, ինչպես նաեւ, որ նրանում միայն ակնարկներ չլինեն: Բացի այդ, հանձնարարության կատարման ողջ ընթացքում խմբագիրը պետք է ցուցումներ տա թղթակիցներին:

ՌԱԴԻՈՅԻ ՀԱՄԱՐ ԼՈՒՐԵՐ ԳՐԵԼԸ

Լրագրության պրոֆեսոր եւ ռադիոհեռարձակման վետերան Էդվարդ Բլիսը մի անգամ գրել է. «Ռադիոյի համար լուրեր գրողի խոսքը պետք է զանգվածային լրատվության բոլոր միջոցներից ամենադյուրընթեռնելին, ամենահասկանալին եւ ամենամաքուրը լինի: Թե ինչու՝ զաղտմիք չէ: Ի տարբերություն թերթերի եւ ամսագրերի, ռադիոյի համար գրողը պարտավոր է այնպես գրել, որ ասելիքը միանգամից ընկալվի: Քանզի բառերն ասացիր թե չէ՝ էլ հետ չես բերի»:

Գրեցեք ականջի համար: Ռադիոռեպորտաժը գրվում է լսելու, ոչ թե դիտելու համար: Դրա համար այն պետք է կանոնավոր կառուցվածք ունենա. սյուժեն պետք է հստակ սկիզբ, շարունակություն եւ ավարտ ունենա: Բացի այդ, այն պետք է շարադրվի խոսակցական ոճով, նախադասությունները պետք է լինեն համառոտ, կոնկրետ եւ ճշգրիտ, բառերը պետք է լինեն հասկանալի, հարկ եղած դեպքում՝ բացատրվեն:

Այն, որ նախադասությունները պետք է «համառոտ» լինեն, չի նշանակում, թե դրանք պետք է բաղկացած լինեն 4-5 բառից: Եթե ձեր տեքստում կարճ նախադասությունները չափից շատ լինեն, այն շատ չոր կինչի: Չէ՞ որ կյանքում դուք այդպես չեք խոսում, ուրեմն նաեւ այդպես չպետք է գրեք: Հաջող սյուժեն կազմված է լինում տարբեր երկարության նախադասություններից: Այսուհանդերձ, ռադիոյի համար ընդունված նախադասությունը սովորաբար մեկ ամփոփ միտք է պարունակում: Այն չի սկսվում դատարկ բառերով, գրված է լինում պարզ եւ հասկանալի լեզվով:

ՍԿՍԵՔ ՍԿՁԲԻՑ

Ընդունված է ասել, որ թերթի համար գրվող տեքստը կառուցվում է «շրջված բուրգի» սբզբունքով. նախ գրվում է ամենակարեւոր ինֆորմացիան, հետո տրվում են ամենակարեւոր մանրամասները, իսկ վերջում մնում են պակաս կարեւոր

տեղեկությունները: Հիմնականում հենց այս կառուցվածքի պատճառով է, որ թերթի սյուժեն հարմար չէ ռադիոթերթի համար, քանի որ նման սյուժեն ունկնդրելիս դժվար է հետեւել դեպքերի զարգացմանը:

Ռադիոռեպորտաժի տեքստը պետք է կանոնավոր կառուցվածք ունենա: Այդպիսի տեքստն ունենում է սկիզբ, մեջտեղ եւ ավարտ: Ռադիոլրագրողն ունկնդրին տվյալ սյուժեի տրամաբանական Ա կետից տանում է դեպի Բ կետը, այնտեղից՝ դեպի Գ կետը եւ այդպես մինչեւ վերջ: Հաճախ, սյուժեի ամենակարեւոր մասն ի հայտ է գալիս ռեպորտաժի վերջում: Իսկ ամենապատասխանատուն ռեպորտաժի սկիզբն է, քանի որ դրանով է սկսվում պատմությունը եւ ունկնդրի նախապատրաստումը դեպքերի հետագա զարգացմանը:

Ռադիոռեպորտաժ գրելիս հարկավոր է նկատի ունենալ, որ սյուժեն սկսվում է ոչ թե թղթակցի խոսքից, այլ ծրագրի հաղորդավարի մուտքից:

Մուտքը ձեր սյուժեի բաղկացուցիչ մասն է, եւ դուք պետք է նախ եւ առաջ դա գրեք: Հակառակ դեպքում դուք վտանգում եք ձեր սյուժեն այնպես կառուցել, որ հաղորդավարը ոչինչ չուրենա այն ներկայացնելու համար:

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Նորությունները շատ կարեւոր են մարդկանց համար: Բոլոր երեւոյթներն աշխարհում փոխկապակցված են եւ ազդում են միմյանց վրա: Այնպիսի իրադարձություններն ու նորությունները, ինչպիսիք են հարկերը, ռազմական հակամարտությունները, եղանակը, իրենց ազդեցությունն են թողնում մարդկանց կյանքի վրա:

Մարդիկ սպասում են նորությունների թողարկումներին՝ ինֆորմացիա ստանալու եւ իմանալու համար, թե ինչ է իրենց սպասվում եւ ինչպես ծրագրել կյանքը:

Ռադիոլուրերն ինֆորմացիայի առանձնահատուկ միջոցներ են, քանի որ դրանցում, ի տարբերություն թերթերի, ժամանակի սահմանափակում կա: Ռադիոն պայքարում է ռադիոլսողների ուշադրությունը գրավելու համար: Եւ քանի որ ունկնդիրները հեշտությամբ կարող են շեղվել, ուրեմն լրատվական ռադիոսյուժեները պետք է գրավեն ունկնդիրների ուշադրությունը եւ ձգտեն պահպանել այն:

Լրատվական ծրագրերի ոչ ակներեւ նպատակը հասարակության հետաքրքրություններին եւ կարիքներին ծառայելն է: Ռադիոլուրեր պատրաստող լրագրողների առաքելությունը ռադիոլսողներին կանոնավորապես, ճշգրիտ եւ օգտակար ինֆորմացիա մատակարարելն է (ՆԿԱՏԵԼ, ԳՐԻ ԱՌԵԼ, ՀԱՂՈՐԴԵԼ):

ԻՆՉ ԵՆ ՄԱՐԴԻԿ ԱԿՆԿԱԼՈՒՄ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՍՅՈՒԺԵՆԵՐԻՑ

Հավաստիություն. լրագրողական պատասխանատվության եւ սկզբունքայնության ապացույցը հավաստիությունն է: Ռադիոլսողների վստահությունը շահելու համար ձեր սյուժեները պետք է համոզիչ լինեն: Իսկ համոզիչ լինելու համար նրանք պետք է լինեն հավաստի:

Վստահություն վայելող լրագրողներն ասեկոսներ չեն հաղորդում եւ չեն խոսում այն մասին, թե ինչ կարող էր պատահել: Նման դեպքերում նրանք պարզապես ասում են, որ փաստերն առայժմ հայտնի չեն:

Անկողմնակալություն. Լրագրողը երբեք չի կարող լիովին օբյեկտիվ լինել, բայց նա պարտավոր է ձգտել անկողմնակալության: Լրագրողը պետք է աշխատի մի կողմ թողնել իր անձնական կարծիքը եւ այն «չխցկել» իր սյուժեի մեջ:

Հստակություն. Որպեսզի սյուժեն «հասնի» ռադիոլսողին, այն պետք է հասկանալի լինի: Եթե սյուժեն պարզ չէ՝ կորցնում է իր իմաստը: Ունկնդիրը պետք է միանգամից ըմբռնի սյուժեն:

Հակազդեցություն. Օրինակ, ինչ-որ քաղաքում ատոմային ռեակտորի կառուցման ծրագիրը հակազդեցության մեծ ալիք է բարձրացրել:

Անսովորություն. Անսովոր պատմություններ: Եթե շունը կծել է մարդուն, դա չի կարող նշանակալի դեպք համարվել, իսկ եթե մարդը կծի շանը, ապա դա, անկասկած, նշանակալի նորություն կլինի:

Մարդկային հետաքրքրասիրություն. Ռադիոլսողները մշտապես հետաքրքրվում են ուրիշ մարդկանցով եւ ուզում են կիսել նրանց պրոբլեմներն ու հաջողությունները:

Սպասում. Երբ մարդիկ ակնկալում են տեղեկություն, լուր ստանալ ինչ-որ բանի մասին (խոսքը որեւէ իրադարձության կամ ինչ-որ որոշման արդյունքների մասին է):

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ

- Ձեր աշխատանքը ձեր հպարտությունն է: Մարդիկ վստահում են ձեզ: Ամեն ինչ արեք ձեր պատմության փաստերի հավաստիությունը ստուգելու եւ դրանց կարելորությունը ճիշտ գնահատելու համար:
- Ամեն օր կարդացեք թերթերը, հեռուստացույց նայեք, ռադիո լսեք:
- Ջարգացրեք ձեր հետաքրքրասիրությունն ու երեւակայությունը:
- Մի՛ բավարարվեք նախնական տեղեկություններով: Աղբյուրներից լուրեր քաղեք այնքան ժամանակ, մինչեւ որ ձեզ հայտնի կդառնան բոլոր կարելոր փաստերը:
- Սովորեք աշխատել ժամանակի ճնշման տակ: Մի՛ նյարդայնացեք:
- Մարդկանց հետ խոսելիս եղեք ուշադիր եւ բարեկիրթ:
- Փաստեր հավաքելիս եղեք համառ, բայց չափը մի անցեք:
- Հետեւեք ձեր առողջությանը: Լրագրողի կյանքը հետաքրքիր է, բայց ֆիզիկական մեծ լարում եւ էներգիա է պահանջում: Եթե առողջ կենսակերպ ունենաք, աշխատանքում մեծ հաջողությունների կհասնեք:
- Հետեւեք ձեր արտաքինին, կեցվածքին, վարքագծին:
- Եղեք ճշտապահ:
- Տեքստը պետք է լինի հստակ եւ լավ կառուցված:
- Բառերը պետք է լինեն ճշգրիտ եւ պարզ:
- Արտասանությունը պետք է լինի ճիշտ:
- Հարկավոր է այնպիսի ռիթմ ընտրել, որ ունկնդիրը կարողանա հետեւել պատմության ընթացքին եւ չչեղվել:
- Ձայնի ելեւեջները պետք է համապատասխանեն կոնտեքստին:
- Ձայնը եւ առգանությունը պետք է նպաստեն սյուժեի ծավալմանը, ոչ թե խանգարեն դրան:

Չդումներ - Լրագրողը պետք է ինֆորմացիայի հավաստի աղբյուրներ գտնի եւ դրանց մասին տեղեկացնի ռադիոլսողներին:

Կոնտեքստ - Լրագրողը ռադիոլսողի ներկայացուցիչն է: Սյուժե պատրաստելիս լրագրողները պետք է զգույշ լինեն եւ ունկնդիրներին սխալ ճանապարհով չտանեն: Եթե 24 ժամանոց իրադարձության ժամանակ 30 վայրկյանանոց ծեծկռտուք է տեղի ունեցել, ապա լրագրողի կողմից խաբեություն կլինի սյուժեն ամբողջովին այդ ծեծկռտուքին նվիրելը: Բացի այդ, եթե սյուժեում բացակայում են ինչ-որ տարրեր, եւ իրադարձությունը կողմնապահորեն է ներկայացված, լրագրողը պետք է թույլ չտա, որ մնան սյուժեն եթեր արձակվի կամ անհրաժեշտ քայլեր ձեռնարկի այն շտկելու համար:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՆԱՅԱՏՈՒՄԸ

Ինչպիսի՞ պատմությունն է իրենից արժեքավոր նորություն ներկայացնում:

Սյուժեի նախապատրաստման յուրքանջյուր փուլում լրագրողը պետք է գնահատի նրա կարելիությունը: Ահա թե ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել նյութը գնահատելիս:

Մոտիկությունը. Իրադարձության կարելիությունը մեծանում է, եթե այն տեղի է ունեցել այն տարածաշրջանում, որտեղ գտնվում է ունկնդիրը:

Կարևորությունը. Պատմությունը կարելի է, եթե այն վերաբերում է հանրահայտ մարդկանց կամ իրադարձություններին:

Ազդեցությունը. Պատմությունը նշանակալի է, եթե մեծ հետեւանքներ է թողնում կամ առնչվում է շատ մարդկանց:

Հակամարտությունը. Մարդկանց, խմբերի, ժողովուրդների կամ գաղափարների միջեւ գոյություն ունեցող ներքին հակամարտությունները:

ԱՄԵՐԻԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԵՒ ՎԱՐԿԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ջրպարտանք: ԱՄՆ-ում եթե լրագրողն ինչ-որ մեկին վարկաբեկող ոչ ճշգրիտ ինֆորմացիա հաղորդի, այդ լրագրողին կարող են դատի տալ: Ինչպես խուսափել դրանից:

- Եղեք ճշգրիտ, մի ասեք ավելին, քան գիտեք:
- Ստուգեք բոլոր փաստերը եւ որոնեք ապացույցներ:
- Մինչեւ դատավճռի հրապարակումը ոչ մեկին հաշիշամոլ, գող կամ մարդասպան մի անվանեք:
- Եթե օգտագործում եք այլ աղբյուրներից վերցված տեղեկություններ, ստուգեք բոլոր փաստերը եւ պարզեք՝ չկա՞րոյոք հնարավոր զրպարտանք:

ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՆՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ-ում լրագրողին կարող են դատի տալ, եթե նա «խցկվի» որեւէ մեկի անձնական կյանքի մեջ: Հանրաճանաչ մարդիկ եւ քաղաքական գործիչները հաճախ բացառություն են կազմում. ենթադրվում է, որ նրանք իրենց գործունեության բերումով մշտապես գտնվում են հասարակական ուշադրության կենտրոնում: Այդ իսկ պատճառով, նրանց անձնական կյանքի մի մասն այլեւս նրանց չի պատկանում:

- Մասնավոր տարածք մտնելուց առաջ ստացեք տանտիրոջ համաձայնությունը:

ԱՆՁՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Եթե դուք ինչ-որ մեկի մասին գտել եք նեղ անձնական եւ անոթալի փաստեր, օգտագործեք միայն այն ինֆորմացիան, որը կարող է հասարակության վրա ներգործություն ունենալ եւ առնչվում է կարեւոր խնդրի:

Օրինակ՝ պարտադիր չէ հայտարարել, թե նախարարը սիրուհի ունի, եթե դուք ինֆորմացիա չունեք այն մասին, որ այդ սիրուհին օգտվում է կառավարական ֆոնդերից: Հակառակ դեպքում այդ տեղեկությունը չի կարող կարեւոր համարվել:

ՓԱՍՏԵՐԸ ՍԽԱԼ ՁԵՒՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Ձեր ռեպորտաժում մի օգտագործեք «բեմադրված» տարրեր:

Օրինակ, եթե ձեր սյուժեն բժշկի մասին է, աշխատեք ձայնագրությունը կատարել այն պահին, երբ նա իսկապես հիվանդ է ընդունում: «Սուտ հիվանդ» մի բերեք եւ մի ստիպեք բժշկին՝ իբրեւ թե քննել նրան:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ

Կարելորն այն է, որ լրագրողները կարողանան պահպանել իրենց անկախությունը, սկզբունքայնությունը եւ հուսալիությունը: Նրանք պետք է զգուշանան կառավարության կամակատարները դառնալուց: Հնարավոր է, որ սյուժեն պատրաստելիս դուք հայտնաբերեք իշխանություններին անհայտ ինչ-որ տեղեկություններ կամ աղբյուր:

Լրագրողները պետք է ինֆորմացիայի իրենց աղբյուրը պաշտպանեն իշխանությունների հետապնդումից: Չնայած նրան, որ ԱՄՆ-ում գոյություն ունի օրենք, ըստ որի լրագրողն իրավունք ունի թաքցնել իր ինֆորմացիայի աղբյուրը, սակայն հայտնի են դեպքեր, երբ լրագրողներին պատժել կամ բանտարկել են այդ աղբյուրները չհրապարակելու համար:

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կառավարական ժողովները, բանաձեւերն ու փաստաթղթերը պետք է մատչելի լինեն հասարակության համար: Յուրաքանչյուր քաղաքացի կամ լրագրող իրավունք ունի մասնակցել այդ ժողովներին եւ օգտվել այդ փաստաթղթերից:

ԱՄՆ-ում եղել են դեպքեր, երբ կառավարությունը չի ենթարկվել այդ օրենքին, եւ մամուլը ստիպված է եղել գործ հարուցել ի պաշտպանություն հանրային ինֆորմացիայի օգտագործման իրավունքի:

ԱՆՁՆԱԿԱՆ ՇԱՐ

Շատ կարելոր է, որպեսզի լրագրողը ընկերական սերտ հարաբերություններ չունենա այն մարդկանց հետ, ում մասին տեղեկություններ է հաղորդում: Դա անհրաժեշտ է լրագրողական անկախության եւ վստահելիության համար: Հաճախ, քաղաքական ընտրությունների ժամանակ, թեկնածուները լրագրողներին ապահովում են սննդով, դրամով եւ այլն: Կարելոր է, որ լրագրողները չմտերմանան իրենց հերոսների հետ եւ նրանցից նվերներ չընդունեն՝ դրանով իսկ արժեզրկելով իրենց սյուժեն:

Անկախությունը պահպանելու համար անհրաժեշտ է նաեւ սյուժեներ չպատրաստել այնպիսի բաների մասին, որոնցում դուք անձնական ֆինանսական շահագրգռություններ ունեք:

Աշխատեք, որ լրագրողների եւ գովազդատուների (ռադիոընկերությունների հովանավորների) միջեւ «տարածություն» պահպանվի: Խուսափեք ձեր հովանավորին մեծարելու գայթակղությունից:

ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Երբեք մի վճարեք ինֆորմացիա ստանալու կամ հարցազրույց վերցնելու համար: Վարձատրությունները միշտ խարխալում են լրագրողի հանդեպ վստահությունը: Դրանք կասկածի են ենթարկում լրագրողի աշխատանքը:

Բացի այդ, սյուժեներ պատրաստելու համար դրամ մի վերցրեք: Թող ձեզ վճարեն միայն գովազդի համար:

ԲԱՐՉՐ ՃԱՇԱԿ

Հնարավոր է, որ դուք երբեմն ցանկություն ունենաք օգտագործել տհաճ ինֆորմացիա: Ամեն դեպքում մարդկայնություն պահպանեք: Ծանրութեթեւ արեք՝ կարելո՞ր է արդյոք այդ ինֆորմացիան հասարակության եւ ընդհանրապես ձեր սյուժեի համար:

ՍՅՈՒԺԵԻ ԶԱՐԳԱՏՈՒՄԸ

Կան որոշակի մեթոդներ, որոնք օգնում են լրագրողին՝ զարգացնելու հայտնված գաղափարը:

- Որոշեք, թե ձեզ ինչ է պետք:
- Փաստերը հավաքելիս եւ ստուգելիս խորհրդակցեք ինֆորմացիայի աղբյուրի հետ:
- Արժեւորեք ձեր ինֆորմացիան, տեսեք՝ ինչ ունեք եւ պարզեք, թե դրանցից որոնք են կարելորդները:
- Նախօրոք ծրագրեք, թե ինչ հերթականությամբ պետք է ներկայացվեն փաստերը:
- Պատկերացրեք արդեն մշակված ինֆորմացիան: Ռադիոլսողներին մատուցեք միայն ամենակարեւոր ինֆորմացիան, ինչպես նաեւ այն փաստերը, որոնք նրանց անձնապես կարող են հետաքրքրել:
- Սկսեք գրել:

ԶԱՅՆԱԳՐԵԼՈՒՑ ԱՌԱՋ

- Ձեզ համար որոշեք, թե ինչպիսի ինֆորմացիա է ձեզ պետք: Աշխատեք, որպեսզի ամեն ինչ կոնկրետ լինի (թվերը, փաստերը, անունները):
- Որոշեք, թե որտեղից եք ձեռք բերելու այդ ինֆորմացիան: Լրագրողն ինֆորմացիայի բազմաթիվ աղբյուրներ ունի.
 - ինֆորմացիա, որ ձեռք է բերել հենց լրագրողը,
 - ինֆորմացիա, որ ստացվել է իրադարձությանն անմիջականորեն առնչվող մարդկանցից,

- բանաձեւեր եւ փաստաթղթեր, որոնք կօզնեն ներկայացնել նախապատմությունը եւ ճշտել փաստերը,
- հասարակական աղբյուրներ՝ պետական եւ ոստիկանական հաշվետվություններ, դատական ակտեր,
- տեղեկատուներ, որոնք միշտ պետք է լինեն խմբագրություններում (քարտեզները, հեռախոսային տեղեկատուները, աշխարհագրական բառարանները եւ այլն),
- գրադարան,
- թեմային առնչվող կազմակերպությունները,
- այդ թեմայով ուսումնասիրություններ կատարող համալսարանները,
- թերթեր, որոնցից հնարավոր է մտքեր քաղել հարցազրույցի համար,
- տվյալների բազաներ (համակարգչային ինֆորմացիա),
- լրատվական ծառայությունները (Արմենպրես, Նոյյան տապան եւ այլք),
- մարդիկ, որոնք լրագրողներին են դիմում իրենց պատմություններով (միշտ ճշտեք մարդու անունը, պարզեք՝ ճշմարիտ է արդյոք նրա պատմածը),
- մամուլի համար արված հայտարարությունները եւ դիմումները (դրանք օգտագործեք միայն որպես ինֆորմացիայի նախնական աղբյուր եւ ստուգեք հայտարարություններում ներկայացված փաստերը):

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ

Հենց որ որոշեք, թե ումից կարող եք ստանալ անհրաժեշտ ինֆորմացիան, զանգահարեք այդ մարդկանց եւ նախնական հարցազրույցներ արեք:

Աշխատեք զանազան հարցազրույցների օգնությամբ՝ այդ թեմայով որքան հնարավոր է շատ ինֆորմացիա ստանալ:

Օրինակ. եթե սյուժեն վերջերս տեղի ունեցած կողոպուտի մասին է, դուք կարող եք հարցազրույցներ անել քննիչների, իրավաբանների, սոցիոլոգների, քրեագետների, օրենսդիր օրգանների պետծառայողների հետ:

Մի ձայնագրեք բոլոր այն մարդկանց, ում հետ զրուցում եք: Այդ նախնական հարցազրույցները տեղեկություններ հավաքելու համար են: Ամեն դեպքում, ձեր զրուցակիցներին հարցրեք, թե կարո՞ղ են արդյոք հետագայում փոքրիկ հարցազրույց տալ սյուժեում օգտագործելու համար: Երբ դուք հավաքեք ողջ ինֆորմացիան եւ անցկացնեք նախնական հարցազրույցները, պատրաստ կլինեք ձայնագրման:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՏԵԽՆԻԿԱՆ

- Կոկիկ հագնվեք: Խուսափեք անխնամ կամ ճչան հագուստից: Ձեր զրուցակիցը պետք է ձեզ լուրջ ընդունի:

- Նախօրոք պատրաստեք հարցերը: Թող ձեր զրուցակիցն իմանա, որ դուք ծանոթ եք թեմային:
- Ճշտեք զրուցակցի անունն ու պաշտոնը եւ գրանցեք այն ժապավենի վրա:
- Այնպես արեք, որ հարցազրույցն անցնի զրույցի նման:
- Նախօրոք մի ասեք, թե ինչ հարցեր եք պատրաստվում տալ: Հարցազրույց տվողին կարող եք ընդհանուր գծերով ծանոթացնել խոսակցության թեմային, բայց կոնկրետ հարցերը նրան մի ներկայացրեք: Հակառակ դեպքում, նրա պատասխանները կարող են շատ «պատրաստված» հնչել, կամ էլ նա կարող է ընդհանրապես հրաժարվել հարցազրույցից:
- Մինչ տեխնիկան նախապատրաստելը, զրուցեք հարցազրույց տվողի հետ, այնպես արեք, որ նա իրեն հանգիստ զգա: Առիթից օգտվելով, ավելի շատ բան պարզեք եւ ձեզ համար ճշտեք այն հարցերը, որոնք մինչ այդ այնքան էլ հասկանալի չէին:
- Հետաքրքրություն դրսեւորեք, բայց ձեր վերաբերմունքը ցույց մի տվեք դեմքի արտահայտությամբ կամ շարժումներով:
- Ուշադիր լսեք պատասխանները: Դրանք կարող են նոր հարցեր ծնել: Մտածեք նաեւ ձեր ձայնի որակի մասին: Հետեւեք, արդյո՞ք ձայնագրել եք այն ամենը, ինչ անհրաժեշտ է ձեր սցենարի համար: Եթե ոչ՝ դուք կարող եք կրկնել հարցը, կամ խնդրել, որ հարցազրույց տվողն իր պատասխանները շարադրի ավելի համառոտ եւ ընդհանրացված: Հարցազրույց տվողին նախազգուշացրեք՝ հնարավոր է, որ դուք միեւնույն հարցը մի քանի անգամ տաք: Նախապես զգուշացրեք նաեւ, որ սյուժեի վերջնական տարբերակում իրենց հարցազրույցից միայն մի փոքրիկ հատված է օգտագործվելու:
- Մի վախեցեք լռելուց: Եթե հարցազրույց տվողը որոշակի լռությունից հետո ինչ-որ ցնցող բան ասի, շատ հնարավոր է, որ նա շարունակի այդ թեման: Բացի այդ, զգացմունքային պահերին ավելի լավ է լռել եւ զգացմունքի դրսեւորման հնարավորություն տալ:
- Արեք այնպես, որ հարցազրույցը դուք տնօրինեք, ոչ թե ձեր զրուցակիցը: Թույլ մի տվեք, որ նա զրույցը շեղի այլ ուղղությամբ:
- Եթե ձեր զրուցակիցը չի պատասխանել որեւէ կարեւոր հարցի, եղեք համառ. հետագայում կրկնեք հարցն այլ ձեւակերպմամբ:
- Ինքներդ մի պատասխանեք ձեր հարցերին: Օրինակ, մի հարցրեք. «Այսօր հրաշալի օր է, այնպես չէ՞»: Ենթադրյալ հարցեր մի տվեք: Օրինակ. «Երբ ամուսնանաք, քանի՞ երեխա կունենաք» (զուցե նա ընդհանրապես չի ամուսնանալու):
- Ձեր հարցերը չպետք է երկար եւ ընդհանուր լինեն, այլ՝ կարճ ու կոնկրետ:
- Խնդրեք, որ ձեր զրուցակիցը բացատրի իր օգտագործած տեխնիկական տերմինները:
- Հարցրեք, արդյոք չի՞ ուզում որեւէ բան ավելացնել:
- Մի մոռացեք լրացուցիչ ձայնային ֆոն եւ աղմուկ ձայնագրել:

Եթե մարդիկ հրաժարվում են հարցազրույցից, փորձեք համոզել, որ իրենց մեկնաբանությունները կարելու է համարության համար: Բացատրեք, որ ունկնդիրները ուզում են լսել նրանց, որ առանց այդ հարցազրույցի՝ այլուժեն ավարտուն չի կարող լինել: Եթե նրանք համաձայն են խոսել, բայց ձայնագրվելուց հրաժարվեն, բացատրեք, որ ունկնդիրներն ավելի շատ անձամբ իրենց կվստահեն, քան այդ խոսքերը փոխանցող լրագրողին:

Մի մոռացեք ձայնագրման համար հարմար վայր ընտրել: Ձեզ բնական ձայնային ֆոն է հարկավոր, սակայն հետեւեք, որ աղմուկը չխլացնի ձեր զրուցակցի ձայնը: Ամենալավը մի խաղաղ շենք կամ ձայնամեկուսացված սենյակ ընտրելն է:

ՈԱԴԻՈԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԸ

Բազմության մեջ դժվար չէ ճանաչել ռադիոլրագրողին՝ ուսից կախված պայուսակի ծանրությունից մի կողմ թեքված մարդուն:

Այժմ այն մասին, թե ռադիոլրագրողին ինչ է պետք հետը վերցնել, ինչը՝ ոչ: Խորհուրդ է տրվում վերցնել.

- Ձեր գլուխը: Առանց հարցասիրության, առողջ բանականության եւ անհամար փաստերը կարճ ժամանակում հիշողության մեջ պահելու փորձառության, մնացած ամեն ինչ կորցնում է իր կարելությունը:
- Թուղթ: Լրագրողների մեծ մասն իր հետ մի քանի թերթ թուղթ են վերցնում, որը նրանք ծալում են երեք տակ (նամակի նման) եւ պահում գրպանում:
- Գրիչներ: Իհարկե, դա ձեր գործն է, բայց խորհուրդ ենք տալիս ամենապակասը երկու գրիչ վերցնել: Մեկ սովորական գնդիկավոր գրիչ եւ մեկ նշագրիչ (մարկեր)՝ ընդգծելու համար տեքստի այն հատվածները, որոնք դուք մտադիր եք հետագայում օգտագործել:
- Ձայնագրիչ (դիկտոֆոն): Մակնիշը եւ մոդելն առանձնապես դեր չեն խաղում, բայց այն պետք է լինի դիմացկուն, հեշտ օգտագործելի, ձայնագրման բարձր որակ ապահովող ձայնագրիչ: Խորհուրդ ենք տալիս հրաժարվել էժանագին սարքերից (AM-FM ռադիոընդունիչներով, միկրոձայններիզներով): Բարձրորակ մասնագիտական դիկտոֆոնը կարող է մինչեւ 800 դոլար արժենալ:
- Միկրոֆոններ: Ձայնագրիչի ներսի միկրոֆոնը ռադիոյի համար սահմանափակ հնարավորություններ ունի: Առանձին միկրոֆոնը պարզապես անհրաժեշտ է: Էժանագին միկրոֆոն գնելը խաբուսիկ տնտեսում կլինի:
- Մեղմիչ: Մեղմիչը սպունգե գլխադիր է, որ հագցվում է միկրոֆոնի վրա՝ ձայնի խշշոցներն ու շվոցները մեղմելու համար: Մասնագիտական լավ միկրոֆոնների մեծ մասն իր ներսում մեղմիչ ունի: Եթե չունի էլ՝ հեշտությամբ կարելի է ավելացնել:
- Միկրոֆոնի հենակալ: Սա օգտագործվում է միկրոֆոնը խոսողի կողմը թեքելու համար: Հենակալը պետք է ամուր եւ հավաք լինի (ցանկալի է ծալովի):
- Միկրոֆոնի լարեր: Նկատի ունեցեք, որ մեկը բավական չէ:

- Մանրադրամ (հեռախոսի ժետոններ): Սա կատակ չէ: Ձեր պայուսակի գրպանիկում միշտ ժետոններ ունեցեք: Եթե դուք աշխատում եք տրանսպորտային աշխույժ երթևեկություն ունեցող քաղաքում, լրացուցիչ ժետոն ունենալը չի խանգարի:
- Աքթօ (կաչուն ժապավեն): Օգտագործվում է լարերը հատակին ամրացնելու համար: Լրագրողների երկու տեսակ կա. մեկը, որ մոտը միշտ սքթօ է պահում, մյուսը՝ միշտ ուրիշներից է խնդրում:
- Շտեկերով լար (միաժանիով լար): Լինում է երկու տեսակ՝ կարգավորող եւ թուլացնող:
- Երկարացման լար: Կախված ձեր առաջադրանքի բնույթից, ձեզ կարող է պետք գալ AC երկարացման լար:
- AC հարմարանք (ադապտեր): Եթե դուք հաճախ եք աշխատում ստուդիայից դուրս՝ տանը կամ մի այլ վայրում, շատ մարտկոցներ կխնայեք, եթե ձեր դիկտոֆոնին հարմար AC հարմարանք ունենաք:
- Պահուստ: Եթե պահեստային մարտկոցներ չունեք, ուրեմն լրիվ արժանի եք այն բանին, ինչ ձեզ հետ կպատահի: Իսկ դա անպայման, վաղ թե ուշ կպատահի: Սա հատկապես կարելու է AA մարտկոցներ օգտագործելիս, որոնք ավելի կարճ կյանք ունեն, քան C եւ D մարտկոցները: Հնարավոր է, որ ամբողջ տարին պահեստային ձայներիզը ձեզ պետք չգա, բայց դուք երջանիկ կլինեք, երբ մի օր դիկտոֆոնը «ծամի» ձեր աշխատանքային ձայներիզը, իսկ դուք պահեստայինն ունենաք:
- Ականջակալներ: Փոքրիկ ականջակալները, որոնք սովորաբար ունենում են մագնիստֆոնը եւ ռադիոընդունիչը, համարյա թե քաշ չունեն, բայց դրանք ձեզ կօգնեն կարգավորել ձայնագրման որակը:
- Տրանզիստորային ռադիո: Փոքրիկ, ոչ թանկարժեք ռադիոն կարող է ձեր լավ օգնականը դառնալ ստուդիայից դուրս աշխատելիս:
- Փեյջեր: Երբեք չպետք է լինի այնպիսի իրավիճակ, որ ստուդիայից չկարողանան ձեզ հետ կապ հաստատել: Բայց հոգացեք, որ ձեզ չանհանգստացնեն, երբ դուք կարելու հանդիպման եք, դահլիճում, դատական նիստում եւ այլն:
- Լապտերիկ: Այն ձեզ պետք կգա գիշերները, ինչպես նաեւ պայուսակում իրեր փնտրելիս:
- Մեքենայի պահեստային բանալիներ: Դուք դեռ բանալիները չե՞ք թողել մեքենայի մեջ: Իսկ ես թողել եմ: Երկու անգամ:
- Քուղ: Արտակարգ իրավիճակներում, ինչպես ասենք բարձրաստիճան հյուրերի այցելությունն է կամ հրդեհը եւ այլն, վատ չի լինի, եթե ձեր հավատարմագիրը քուղով կախեք ձեր վզից՝ ամեն անգամ հանելու վրա ժամանակ չկորցնելու համար:
- Բջջային հեռախոս (ցանկալի է):
- Մի բան, որի մեջ հնարավոր լինի այս ամենը լցնել: Հազվադեպ լրագրողներ են անհրաժեշտ համարում այս ամենը հետները վերցնել: Ընտրեք ձեր որոշմանը համապատասխան պայուսակ: